ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4314-Ա « 26 » դեկտեմբերի 2023թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 16.11.2023 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/69» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները: Ընկերությունը սույն թվականի դեկտեմբերի 1-ին ներկայացրել է համապատասխան գրություն՝ հրաժարվելով պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումից:

Երևանի քաղաքապետարանը հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացրած գրությունը՝ միակողմանի (ամբողջությամբ) լուծել է «ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքած պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ սույն թվականի դեկտեմբերի 14-ին և ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը այն ուղարկվել է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին: Պայմանագիրը դեկտեմբերի 15-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա՝ ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ